## Տ. ՎՐԹԱՆԵՍ ԱԲԵՂԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Ծնվել է 1962 թ. մարտի 21-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղում:

1969—79 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1981—83 թթ. ծառայել է սովետական բանակում:

Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1987 թ. դեկտեմբերի 25-ին, Ստեփանոս Նախավկայի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ:

1988 թ. մարտի 10-ին, «Աղվանից Եկեղեցու համառոտ պատմություն (Դ—ԺԷ դարեր)» թեմայով պաշտպանել է ավարտաճառ և արժանացել քաջալավ գնահատականի:

Այժմ աշխատանքի է նշանակված Մայր տաճարի թանգարանում: